ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
0010 քաղ. Երևան, Վ. Վաղարշյան 13Ա, հեռ. 011-900-011, ֆաքս 011-90-00-18

N 18- 1648-19
04 փետրվարի, 2019թ.

62224715 քրեական գործով մեղադրյալ
Արաքս Դիլանյանին

Ուղարկում եմ թիվ 62224715 քրեական գործով Ձեր միջնորդությունն ամբողջությամբ մերժելու մասին որոշումը:

Առդիր 2 թերթ

Հարգանքով՝

Ընդհանուր բնույթի հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ՝ **Դ.Կոստանդյան**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թիվ 62224715 քրեական գործով մեղադրյալ Արաքս Դիլանյանի միջնորդությունն ամբողջությամբ մերժելու մասին

04.02.2019թ. ք.Երևան

ՀՀ հատուկ քննչական ծառայության ընդհանուր բնույթի հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Դ.Կոստանդյանս, քննարկելով վարույթիս թիվ 62224715 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ գործադիր իշխանության մարմնի ղեկավար աշխատողի կողմից առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու դեպքի առթիվ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող թիվ 62224715 քրեական գործի նախաքննության ընթացքում 25.12.2018թ. Արաքս Հրաչյայի Դիլանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով այն արարքի կատարման համար, որը դրսևորվել է նրանում, որ նա օժանդակել է պաշտոնատար անձի կողմից առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալուն:

Նախաքննության ընթացքում մեղադրյալ Արաքս Դիլանյանի նկատմամբ կիրառվել է ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց:

2019թ. հունվարի 31-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ստացվել է մեղադրյալ Արաքս Դիլանյանի միջնորդությունը, որով վերջին խնդրել է թույլատրել ՀՀ-ից 15 օր ժամանակով մեկնել իր մշտական բնակության վայր՝ քաղաք Դուբայ և տրամադրել անձնագիրը:

Մեղադրյալը միջնորդությամբ հայտնել է, որ 2018թ. դեկտեմբերին Դուբայում աչքը վիրահատել են, որից հետո վերադարձել է Հայաստանի Հանրապետություն և մեղադրյալի կարգավիճակում գտնվելու պատճառով զրկվել է Դուբայ մեկնելուց և հետվիրահատական ստուգումների ենթարկվելուց:

Մեղադրյալը նաև հայտնել է, որ Դուբայ մեկնելու անհրաժեշտությունը պայմանավորված է աշխատանքային գործունեության հետ՝ նկատի ունենալով, որ թարգմանչի լիցենզիա ստանալու համար Դուբայում պետք է մասնակցի համապատասխան դասընթացների:

Ուսումնասիրելով մեղադրյալ Ա.Դիլանյանի միջնորդությունը՝ գտնում եմ, որ այն ենթակա է ամբողջությամբ մերժման հետևյալ պատճառաբանությամբ՝

,,ՀՀ քաղաքացու անձնագրի մասին,, ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես վերցնում է հետաքննության կամ նախաքննության մարմինը: Կասկածյալի և մեղադրյալի անձնագիրը պահվում է վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց մոտ և վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո անմիջապես:

Վերը նշված հոդվածի հիմքով վարույթն իրականացնող մարմինը վերցրել է մեղադրյալ Արաքս Դիլանյանի անձնագիրը:

Մեղադրյալ Ա.Դիլանյանի կողմից ներկայացված միջնորդությանը կցված նյութերը որևէ տվյալ չեն պարունակում այն մասին, որ Արաքս Դիլանյանի վկայակոչած հետազոտությունը հնարավոր է իրականացնել բացառապես Դուբայում և նրա մատնանշած բժշկական կենտրոնում, որպիսի պայմաններում ակնհայտ է, որ մեղադրյալ Արաքս Դիլանյանը պատշաճ բժշկական զննություն կարող է անցնել նաև Հայաստանի Հանրապետության տարածքում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ չհեռանալու մասին ստորագրություն տված կասկածյալը կամ մեղադրյալը չի կարող առանց հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատավորի թույլտվության մեկնել այլ տեղանք կամ փոխել բնակության վայրը: Նա պարտավոր է ներկայանալ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի և դատարանի կանչով և նրանց հայտնել իր բնակության վայրը փոխելու մասին:

Թիվ 62224715 քրեական գործի նախաքննության ներկա փուլում ակտիվորեն իրականացվում են քննչական և դատավարական գործողություններ, որպիսի հանգամանքով պայմանավորված, նախաքննության անհրաժեշտությունից ելնելով՝ վարույթն իրականացնող մարմինը նպատակահարմար չի գտնում թույլատրել մեղադրյալ Արաքս Դիլանյանին մեկնելու Հայաստանի Հանրապետությունից:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ մեղադրյալ Արաքս Դիլանյանի միջնորդությունն անհիմն է, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 20-րդ կետով, 102-րդ և 199-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 62224715 քրեական գործով մեղադրյալ Արաքս Դիլանյանի միջնորդությունն ամբողջությամբ մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:
2. Որոշման օրինակն ուղարկել մեղադրյալ Արաքս Դիլանյանին՝ պարզաբանելով, որ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի՝ սույն որոշումը կարող է բողոքարկվել դատախազին:

Վարչության պետի տեղակալ՝ Դ.Կոստանդյան